Հաստատում եմ
Դպրոցի տնօրեն՝ Ռ. Զաքարյան
«30» 03 2023թ

«ԴԱՐԲԱՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ, ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ / ԴԱՍԱՐԱՆ
/ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ /6-7-8-րդ դասարաններ/11-14տարեկան/

ԺԱՄԱՔԱՆԱԿ
ՏԱՐԵԿԱՆ 68 ԺԱՄ ,ՇԱԲԱԹԱԿԱՆ՝2

Դասավանդող ուսուցիչ՝ Զատիկյան Համեստ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Վերջին տարիներին էապես փոխվել են հիմնական դպրոցում <<Հայոց պատմության>> դասավանդման նպատակներն ու խնդիրները՝հիմք ընդունելով ՀՀ Կրթության մասին և Հանրակրթության մասին օրենքները, Հանրակրթության պետական նոր չափորոշիչը և առարկայական չափորոշիչն ու ծրագիրը: Սովորողների բարոյական և մշակութային կատարելագործմանը ծառայում են պատմական ժառանգությունը և փորձը, հասարակության մեջ իրենց տեղը գտնելուն, պատմական արմատները ճանաչելուն և պատմական հիշողությունը ձևավորելուն: Այսօր առաջնահերթ խնդիր է կրթության որակի բարելավումը: Ցանկացած հասարակարգում պատմության ուսուցիչը եղել և մնում է գաղափարական ճակատի ձևավորողը, պաշտպանական բնագծերի ամրապնդողը:

Հայոց պատմության իմացության միջոցով է ձևավորվում հայի ազգային ինքնագիտակցությունն ու մտածողությունը, նրա միջոցով է աճող սերունդը հաղորդակցվում իր ժողովրդի անցյալին,պատմամշակութային ժառանգությանը: Միաժամանակ, սեփական պատմության իմացությունը հնարավորություն է տալիս իրականացնելու ազգային նպատակները, պահպանելու և ապահովելու հայի, որպես տեսակի, շարունակականությունը:

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Ներկայացնել Հայաստանի պատմամշակութային ժառանգությունը
2. Ձևավորել և զարգացնել մշակութային ժառանգության պահպանման, զարգացման և հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտության գիտակցություն:
3. Նպաստել հայրենաճանաչության, հայրենասիրության, ազգային ինքնագիտակցության ու մտածողության ձևավորմանը:
4. Արժևորել ներկան և ապագան կերտելու գործում ազգային պատմության իմացության նշանակությունը :

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Խմբակի անդամները կկարողանան՝

1.Ցույց տալ Հայաստանի և հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության տեղը և դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ:
2. Ներկայացնել ազգային-քրիստոնեական մշակույթի զարգացման հիմնական առանձնահատկությունները:
3. Գիտակցել մշակութային արժեքները պահպանելու, զարգաց-նելու, հաջորդ սերունդներին փոխանցելու անհրաժեշտությունը:
4. Հետազոտել իր համայնքի կամ տարածաշրջանի պատմաճար-տարապետական որևէ հուշարձան :

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1. Աշխատանք սկզբաղբյուրների հետ:
2. Սահիկաշարի կամ տեսանյութի պատրաստում
3. Ֆիլմի կամ տեսանյութի դիտում ,քննարկում
4Նկարների ,քանդակների,խաչքարային արվեստի վերլուծություն
5. Համեմատական աշխատանք
6Հետազոտական աշխատանք
7. Երևակայական ճանապարհորդություն
8. Մցույթների, վիկտորինաների կազմակերպում
9. Դաս-էքսկուրսիաների կազմակերպում

Հ/Հ	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ՆՊԱՏԱԿ	ԺԱՄ
1.	**Եկեղեցիներ ու վանքեր**	Ծանոթանալ պատմամշակութային շենքերի կառուցման արվեստին Արժևորել եկեղեցիների ու վանքերի դերը ազգային ինքնության և պահպանության գործում: Դաստիարակել սեր և հարգանք հայրենի երկրի, նրա արժեքների նկատմամբ	**14**
1.	Հայաստանի եկեղեցիներն ու վանքերը		3
2.	Տեղեկություններ Հյաստանի եկեղեցիների ու վանքերի մասին		3
3.	Վանական համալիրներ		4
4.	Ճանաչողական էքսկուրսիա/ մոտակա եկեղեցի ու վանական համալիր/		2
5.	Սահիկաշարի պատրաստում: Զեկույց		2
2	**Թանգարաններ**	Նպաստել թանգարանային մշակույթի վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, թանգարանների դերը արժևորելու զարգացմանը: Ձևավորել մշակութային ժառանգության պահպանման,զարգացման և հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտության գիտակցում:	**14**
1	Տեղեկություններ թանգարանների մասին		2
2	Հայաստանի թանգարանները,տեսակները		6
3	Թանգարանների դերը մարդու կրթության և բարեկեցիկ հասարակության ձևավորման գործում		2

4	Ճանաչողական էքսկուրսիա մոտակա թանգարաններ		1
5	Համեմատական,հետազոտական աշխատանք		2
6.	Սահիկաշարի պատրաստում		1
3.	**Կոթողներ,հուշարձաններ**	Զևավորել հուզական արժեքային և հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի, իր փոքր հայրենիքի (մարզ, քաղաք, գյուղ), ինչպես նաև պատմական հայտնի հուշարձանների նկատմամբ: Դաստիարակել սեր և հարգանք հայրենի երկրի, նրա արժեքների նկատմամբ Զարգացնել վերլուծական, դատողական մտածողություն	**12**
1	ՀՀ կոթողներ և հուշարձաններ		3
2	Հուշարձանը՝ որպես հավերժացնող արվեստի ստեղծագործություն		4
3	Հուշարձանները՝ որպես համամարդկային արժեքներ		4
4	Պատրաստել զեկույց		1
4	Քաղաքներ և ամրոցներ	Զարգացնել ինքնուրույն հետազոտական կարողություններ Զևավորել քննական հակիրճ վերլուծությունգրելու կարողության զարգացում Արժևորել քաղաքների և ամրոցների կառուցման դերը	14
1	Քաղաքաշինություն և ճարտարապետություն		2
2	Տեղեկություններ հնագույն քաղաքների մասին		5
3	Բերդ-ամրոցներ		5

4	Ճանաչողական էքսկուրսիա	երկրի և պետականության պահպանության գործում	1
5	Էսսե		1
5	Հնավայրեր և արգելոցներ	Նպաստել ինքնաճանաչման , ինքնակակատարելագործման շարունակական ձգտմանը Նպաստել հայրենաճանաչության, հայրենասիրության, ազգային ինքնագիտակցության ու մտածողության ձևավորմանը Արժևորել սեփական հայրենիքի՝ որպես հնագույն պետության տեղն ու դերը աշխարհի հնագույն պետությունների շարքում	10
1	Պատմական ակնարկ		2
2	Հնավայրեր		3
3	Արգելոցներ		3
4	Այցելություն Սյունիքի հնավայրեր և արգելոցներ		2
1	Անդրադարձ խմբակի թեմաներին		2
2	Հաշվետու դաս	Ձևավորել գիտելիքներն ու հմտությունները, բարոյական սկզբունքները կյանքում կիրառելու ցանկություն և կարողություն	2

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթության մասին ՀՀ օրենք
2. Հանրակրթության պետական չափորոշիչ
3. Արմինե Սարգսյան, Արման Մալոյան,Հայոց պատմություն,VI-VII դասարաններ, Ուսուցչի ձեռնարկ, Երևան , Զանգակ հրատարակչություն 2013թ: